ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՅՈՒՂՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

Վ. Ի. Լենինը սոցիալիստական մրցության կազմակերպումն ու ծավալումը համարում էր ժողովրդական զանգվածների ստեղծագործական ուժերի ծավալման, նրանց կոմունիզմի ոգով դաստիարակելու կարևոր միջոց։

«Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը,— գրել է Վ. Ի. Լենինը 1917 թ. դեկտեմբերին,— այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով։

Այժմ, երբ իշխանության գլուխ է անցել սոցիալիստական կառավարությունը, մեր խնդիրն է կազմակերպել մրցությունը»[1]։

Երկրորդ հնգամյակի տարիներին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրները հաջողությամբ լուծելու նպատակով կուսակցությունը՝ զինված սոցիալիստական մրցության կազմակերպմամբ աշխատավորների կոմունիստական գիտակցությունը բարձրացնելու, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք դաստիարակելու վերաբերյալ լենինյան ցուցումներով, հսկայական կազմակերպական աշխատանք ծավալեց աշխատավորական լայն զանգվածներին սոցիալիստական մրցության մեջ ընդգրկելու համար։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես և Հայաստանում սոցիալիստական ինդուստրացման հաջողությունների, սոցիալիստական մրցության լայն ծավալման պայմաններում սկսվեց կոլտնտեսային շարժման նոր վերելքը։

Կոլտնտեսությունների ամրապնդման ու սոցիալիստական մրցության ծավալման գործում առանձնահատուկ դեր խաղացին ՄՏԿ-ների քաղաքաժինները։ Այդ է վկայում ՄՏԿ-ներում ծավալված սոցիալիստական մրցությունը։

Արձագանքելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի կոչին, Հայաստանի ՄՏԿ-ների աշխատողները լայն թափ հաղորդեցին սոցիալիստական մրցությանն ու հարվածայնությանը։ 1934 թ. վերջերին Լենինականի ՄՏԿ-ի 84 տրակտորիստներից և բանվորներից 70-ը մրցում էին միմյանց հետ։ Նրանցից հարվածայինի կոչում էին ստացել 35-ը, պարգևատրվել էին 23 ամենից առաջավոր տրակտորիստներն ու բանվորները։ Բասարգեչարի (Վարդենիս) ՄՏԿ-ում մրցող 47 տրակտորիստներն էլ կատարել և գերակատարել էին պլանները։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 493—494։

Վաղարշապատի (Էջմիածին) ՄՏԿ-ում 170 մրցողներից պլանները կատարել էին 140-ը և այլն[2]։

Լայնորեն ծավալված սոցիալիստական մրցությունը ծնեց սոցիալիստական աշխատանքի բազում առաջավորներ։ Բազմաթիվ տրակտորիստներ, տրակտորային բրիգադավարներ ու կոմբայնավարներ արժանացան կենտրոնական, երկրային, հանրապետական, շրջանային և քաղաքաժինների թերթերի սահմանած կարմիր տախտակներում հիշատակվելու պատվին, ինչպես նաև դրամական պարգևների ու թանկարժեք նվերների։

1933 թ. փետրվարի 15—19-ը Մոսկվայում կայացած հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարին մասնակցում էին նաև Հայաստանի մի շարք առաջավոր կոլտնտեսությունների պատվիրակներ։ Ոգևորված կոլտնտեսային շինարարության նվաճումներով և փայլուն հեռանկարներով, համագումարի մասնակիցները դիմում ուղղեցին ՍՍՀՄ բոլոր կոլտնտեսականներին, որով կոչ էին անում սոցիալիստական մրցություն ծավալել հանուն կոլտնտեսային դաշտերի բարձր բերքատվության։ Համագումարի այդ դիմումը լայն արձագանք գտավ ամբողջ երկրում։ Մրցությունն ընդգրկեց նաև Հայաստանի կոլտնտեսությունները։ Ղամարլուի (Արտաշատ) շրջանի հարվածային կոլտնտեսությունների հավաքը, քննելով հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարի արդյունքները, որոշեց սոցիալիստական մրցության մեջ մտնել Հայաստանի մյուս բամբակագործական և այգեգործական շրջանների հետ[3]։ Այսպես, Ախտայի (Հրազդան) շրջանի հարվածային կոլտնտեսականների հավաքը, քննարկելով համագումարի դիմումը, իր որոշման մեջ արձանագրեց. «Ընդունելով հարվածային կոլտնտեսականների համագումարի կոչը, մենք մտնում ենք բարձր բերքատվության, սերմացուի լրիվ գանձման, գարնանացանի լրիվ նախապատրաստման ու կատարման համար հայտարարված համամիութենական մրցության մեջ»[4]։ Հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարի մասնակիցների դիմումին արձագանքելու համար Հայաստանի 19 շրջաններում կազմակերպված հավաքներին մասնակցել են 3900 հարվածային կոլտնտեսականներ[5]։ Ծավալված սոցիալիստական մրցության շնորհիվ հանրապետության կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները երկրորդ հնգամյակի առաջին գարնանացանը հաջողությամբ ավարտելուց հետո հարվածային կոլտնտեսականների հանրապետական I համագումար եկան զգալի նվաճումներով։ Այդ համագումարը գումարվեց 1933 թ. հունիսի 14-ին։ Մասնակցում էին 600 կոլտնտեսականներ, 50 աշխատավոր մենատնտեսներ և 50 բանվորներ։ Ուշագրավ է, որ համագումար էին եկել նաև Վրաստանի, Ադրբեջանի, Նախիջևանի և Միջին Վոլգյան երկրամասի Զապատևյան շրջանի Բեզենչուկի ՄՏԿ-ի սպասարկած շրջանների հարվածային կոլտնտեսականների ներկայացուցիչները[6]։

---

2 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 204, գ. 4, թ. 9—15։

3 Նույն տեղում, ֆ. 41, ց. 1, գ. 49, թ. 75։

4 «Քաղրաժնի խոսք», 21. VIII. 1934։

5 ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսարխիվ, ֆ. 1, պ. մ. 33, կ. 21, թ. 27։

6 «Խորհրդային Հայաստան», 1933, № 135։

Քննության առնելով գարնանացանի արդյունքները և բարձր բերքատվության նախապատրաստվելու խնդիրները, համագումարը Հայաստանի բոլոր կոլտնտեսականներին կոչ արեց աշխատել ազնվորեն, պայքար մղել հանուն բարձր բերքատվության, ժրաջան կերպով խնամել ցանքերը. հոգատար վերաբերմունք ցուցաբերել անասունների, գործիքների և մեքենաների նկատմամբ, տիրապետել տեխնիկային։ Համագումարի կոչում ասվում էր, որ բերքահավաքի լավագույն կազմակերպումով պետք է հզորացնել կոլտնտեսությունները, ժամանակին կատարել պետական բոլոր պարտավորությունները և բոլոր կոլտնտեսականների համար ստեղծել ունևոր ու բարեկեցիկ կյանք։

Համագումարի ընդունած դիմումի մեջ ասված էր. «...թույլ տվեք, ընկեր կոլտնտեսականներ, բոլորի անունից հավատացնել մեր կուսակցությանն ու իշխանությանը, որ մենք անդառնալիորեն արդեն բռնել ենք ունևորության ճանապարհը, որ մենք կգլխավորենք հազարավոր և տասնյակ հազարավոր ազնիվ մենատնտեսների նոր հոսքը դեպի կոլեկտիվ տնտեսությունները և մեր ուժն ու եռանդը, մեր սիրտն ու հոգին, մեր ներվերն ու արյունն ամուր կապել ենք խորհրդային կարգերի հետ, կոլտնտեսային կարգերի հետ»[7]։ Հայաստանի կոլտնտեսականներն այս խոսքերով արտահայտել էին ոչ միայն իրենց, այլև ամբողջ ՍՍՀՄ-ի կոլտնտեսային գյուղացիության մտքերն ու հույզերը։

Համագումարի կոչը նոր թափ հաղորդեց Հայաստանի բոլոր շրջաններում ու կոլտնտեսություններում ծավալված սոցիալիստական մրցությանը, որը մեծապես նպաստում էր առաջավոր փորձի տարածմանը։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունները, ՄՏԿ-ների քաղբաժիններն ու գյուղական սովետները լայնորեն պրոպագանդում են երկրի առաջավոր կոլտնտեսությունների, բրիգադների, տրակտորիստների ու կոլտնտեսականների փորձը։ Այսպես, օրինակ, Ղամարլուի ՄՏԿ-ի ավիաթերթիկներից մեկում մանրամասնորեն նկարագրվում էր տրակտորային բրիգադի բրիգադավար Հ. Առաքելյանի բրիգադի աշխատանքի փորձը[8]։ Բամբակահավաքի անդրկովկասյան մրցույթի ընթացքում լայնորեն պրոպագանդվում էր Ադրբեջանի հայտնի բամբակահավաք Իսա Նամազովի՝ երկու ձեռքով բամբակ հավաքելու ուսանելի փորձը։

Առաջավոր փորձի փոխանակման և ստանձնած պարտավորությունների փոխստուգման վառ օրինակներից էր Հայաստանի կոլտնտեսությունների ակտիվ մասնակցությունը Անդրկովկաս-Բեզենչուկ և Անդրկովկաս-Միլոստ-Կուրակինո սոցիալիստական մրցությանը։ Հենց որ «Правда»-յում հրապարակվեցին Միջին Վոլգայան երկրամասի Ջապակայան շրջանի Բեզենչուկի կոլտնտեսականների առաջին և երկրորդ նամակները՝ ուղղված կուսակցության Կենտկոմին, դրանք արագորեն տարածվեցին Հայաստանի բոլոր կոլտնտեսություններում։ «Աշխատել ինչպես բեզենչուկյան առաջավոր կոլտնտեսականները» լոզունգը խթանեց կոլտնտեսային զանգվածների աշխատանքային վերելքը[9]։

Անդրկովկասի կոլտնտեսականներն ու բեզենչուկցիները պատվիրակությունների փոխանակություն կատարեցին։ Դա մեծապես նպաստեց Հայաս-

7 Նույն տեղում։
8 ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսարխիվ, ֆ. 813, գ. 30, թ. 89։
9 Նույն տեղում, գ. 20, թ. 89։

տանում բեկենչուկցիների փորձն արմատավորելու և կոլտնտեսային արտադրությունն էլ ավելի բարձրացնելու գործին։ Սակայն Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի կոլտնտեսությունները միայն ընդօրինակողի դերում չէին հանդես դալիս։ Որոշ հարցերում, ինչպես նշում էր «Правда»-ն, նրանք ավելի մեծ ե դրական փորձ ունեին, քան Բեզենչուկի ամենալավ կոլտնտեսությունները[10]։

Նույնպիսի ակտիվության, փոխադարձ ստուգման և վերահսկողության պայմաններում էր ընթանում Անդրկովկաս-Միլոստ-Կուրակինո մրցությունը։ «Առանց հանդիսավոր աղմկարարության, —գրում էր «Правда»-ն,— Անդրկովկասի բոլշևիկները մեծ և կարևոր գործ են կատարում. լայնորեն ծավալվել է մրցությունը Անդրկովկասի և Միլոստ-Կուրակինոյի ՄՏԿ-ի կոլտնտեսային բրիգադների միջև»[11]։ Ղարաքիլիսայի (Կիրովական) շրջանի անասնապահները «Правда»-յում պատմելով այդ մրցության և իրենց դրական փորձի մասին, գրում էին, որ միլոստ-կուրակինոցիների յուրաքանչյուր քայլը, ինչպես և իրենցը, փոխադարձաբար հայտնի է միմյանց, որ կոլտնտեսությունների ներսում իսկ լայն ծավալ են ստացել փոխստուգումն ու վերահսկողությունը[12]։

Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահ Գ. Դիմիտրովը, որը ուշադրությամբ հետևում էր Անդրկովկաս-Միլոստ-Կուրակինո մրցությանը, մեծ նշանակություն էր տալիս մրցության այդպիսի լայն ծավալմանը։ Անդրկովկասի կոլտնտեսային բրիգադավարներին ուղղած նամակում նա գրում էր. «Անդրկովկասի կոլտնտեսությունները Արևելքի շեմքին՝ արևելյան և բալկանյան երկրների աշխատավորներին կոնկրետ կերպով ցույց են տալիս, որ միմիայն խորհրդային իշխանության գոյությամբ, միայն կոլտնտեսային կարգերի հիման վրա, բանվոր դասակարգի և նրա բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ է հնարավոր ղանաղան ազգությունների սերտ եղբայրական գոյակցության և ազգային կուլտուրայի վերելքը»[13]։

Ընդօրինակելով մեր երկրի առաջավոր շրջաններին և կոլտնտեսություններին, Հայաստանի կոլտնտեսություններն իրենց հերթին հանդես բերեցին սեփական նախաձեռնության փայլուն նմուշներ։ Ղարաքիլիսայի շրջանի կոլտնտեսականներ Միքայելյանի և Քոչարյանի նախաձեռնությամբ պրակտիկա դարձավ հողամասերի և անասունների անձնադրավորումը։ Դրա էությունն այն էր, որ խնամքով գրանցվում և պահվում էին յուրաքանչյուր հողամասի կամ անասունի մասին բոլոր տվյալները և դրանք պարբերաբար համեմատության մեջ էին դրվում նոր ձեռք բերվող ցուցանիշների հետ։ Դա զգալի դեր էր կատարում անասունների մթերատվությունը բարձրացնելու, ինչպես նաև աշխատանքի ընթացքում դիմազրկությունը վերացնելու գործում։ Այս դրական փորձը մասսայականացնելու և պրակտիկայում արմատավորելու ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների ու գյուղական սովետների լայն բացատրական աշխատանքի շնորհիվ այն կարճ ժամանակամիջոցում տարածվեց ողջ հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս։

---

10 «Правда», 24.VI.1933.

11 Նույն տեղում, 31. III. 1933։

12 Նույն տեղում, 7. V. 1934։

13 Նույն տեղում, 22. V. 1934։

«Правда»-ն այդ մասին գրում էր. «Անասունների ու հողամասերի անձնադրավորումը, որը սկսվել է անդրկովկասյան բրիգադավարներ Միքայելյանի ու Քոչարյանի նախաձեռնությամբ, հայտնի է այժմ Միլոստ-Կուրակինոյի կոլտնտեսություններում։ Անդրկովկասի անասնապահական բրիգադները մի գրքույկ են կազմել, որտեղ մանրամասն շարադրվում է նրանց փորձը։ Գրքույկն ուղարկված է Միլոստ-Կուրակինո։ Այդ ՄՏԿ-ի քաղբաժնի պետ ընկ. Ցեգուևը հեռագրի մեջ հաղորդում է, որ «կոլտնտեսականները մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում գրքույկի նյութերին և քննարկում են դրանք»[14]։

Սոցիալիստական մրցությունն է՛լ ավելի լայնորեն ծավալելու, ինչպես նաև կոլտնտեսային կյանքի ու աշխատանքի բոլոր բնագավառներում աշխուժություն մտցնելու գործում վճռական նշանակություն ունեցան նաև հանրապետության կոլտնտեսություններում ամենաբազմազան ձևերով տարվող մասսայական-քաղաքական աշխատանքները (կոլտնտեսականների զանազան հավաքներ, փոխադարձ ստուգում, արշավների կազմակերպում, արտադրական «հինգ բոպեի» խորհրդակցություններ, կուլտուր-կենցաղային կոնֆերանսներ ու արշավներ, ագիտացիոն սայլեր, կարմիր ու սև տախտակներ, «Իլյիչովկաներ», պատի թերթեր և այլն)։

Կուսակցական կազմակերպությունների և գյուղական սովետների ծավալած մասսայական քաղաքական և կազմակերպական լայն աշխատանքի շնորհիվ օրեցօր ծնվում էին կոլտնտեսային աղատ աշխատանքի նորանոր հերոսներ, որոնք կոտրում էին հին նորմաները, պայքարում քարացածության դեմ, համարձակորեն առաջ քաշում նոր նորմաներ՝ սովետական առաջավոր տեխնիկայի և արտադրական հարաբերությունների պահանջին համապատասխան։

Սոցմրցության և հարվածայնության իսկական համաժողովրդականության մասին է խոսում այն փաստը, որ Ստեփանավանի շրջանի Վորոնցովկա (Կալինինո) գյուղում մրցության մեջ էին ներգրավված բոլոր կոլտնտեսականների 70, իսկ Կուրթանում՝ 90%-ը։ Եթե քաղբաժնի գործունեության սկզբում այստեղ ոչ մի հարվածային չկար, ապա մեկ տարում քաղբաժինը կոփեց և համախմբեց հարվածայինների մի պատկառելի բանակ՝ 668 հոգի[15]։ Օրինակի համար վերցնենք նաև Վաղարշապատի ՄՏԿ-ի սպասարկած գոտին. եթե այստեղ 1933 թ. կային ընդամենը 500 հարվածայիններ, ապա մեկ տարում նրանց թիվը քառապատկվելով հասավ 2000-ի[16]։

Այսպիսով, սոցիալիստական մրցության ծավալումը խթանեց կոլտնտեսականների ստեղծագործական եռանդը, բացահայտեց կոլտնտեսային կարգերի հիմքում ընկած անսպառ ռեզերվները և դրանք ի սպաս դրեց կոլտնտեսությունների ամրապնդման ու կոլտնտեսականների բարեկեցության մակարդակը բարձրացնելու գործին։ Կանայք, որ աշխատավորության կեսն էին կազմում, ներգրավվեցին արտադրական ակտիվ գործունեության մեջ։ Դա վերին աստիճանի կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր։ Կոլտնտեսուհիներին արտադրության մեջ ներգրավելու հետ միասին տեղական կուսակցական կազմակերպություններն ու ՄՏԿ-ների քաղբաժինները նրանց շրջա-

---

14 Նույն տեղում, 7. V. 1934։

15 ՀԿԿ Կենտկոմի կուսարխիվ, ֆ. 813, գ. 20, թ. 24։

16 ՄԼԻ վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 125, գ. 1, թ. 119։

նում ծավալում էին սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը։ Այսպես, օրինակ, միայն Ստեփանավանի ՄՏԿ-ի քաղաքաժինը մինչև 1934 թ. հուլիսի մեկը հարվածայնության էր հասցրել 472 կոլտնտեսուհիների, իսկ նույն շրջանի Վորոնցովկա գյուղի «Ավանգարդ» կոլտնտեսության հարվածայինների 60%-ից ավելին կանայք էին[17]։ Սոցիալիստական մրցության մեջ լայնորեն ներգրավված էին նաև Լենինականի ՄՏԿ-ի սպասարկած կոլտնտեսությունների կանայք։ Միայն բերքահավաքի ժամանակ նրանցից 310-ն ընդգրկված էին սոցիալիստական մրցության մեջ, հարվածայիններ էին 140-ը, քաղաքաժնի կողմից պարգևատրվել էին 40-ը և այլն։

Ամբողջ Հայաստանում ծավալված կին-պատգամավորական ժողովների մրցությանը, միայն 15 շրջանների տվյալներով, մասնակցում էին 1200 կոլտնտեսուհիներ[18]։ 1933 թ. հարվածային կոլտնտեսականների շրջանային հավաքներից յուրաքանչյուրին մասնակցել են միջին թվով 150—300 հարվածային կոլտնտեսուհիներ[19]։

Հանրապետության միայն 19 շրջանների տվյալներով, նրանց ընդհանուր թիվը կազմել է 3900 հոգի։ Հայաստանի միայն 13 շրջանների տվյալներով գարնանացանի կամպանիայի ընթացքում պարգևատրվել էին 620 կոլտնտեսուհի, 237 պատգամավորուհի, 32 գյուղսովետների անդամ կանայք[20]։

Գյուղսովետների միջև ընթացող մրցությունը հատկապես 1932—1934 թթ. զգալիորեն նպաստեց դրանց ղեկավար դերի բարձրացմանը՝ գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի աճն ու ամրապնդումն ապահովելու գործում։ Դա նպաստեց նաև սովետական ակտիվի ստեղծման ու աճեցման գործին և ամրապնդեց սովետների կապը կոլտնտեսային գյուղացիական զանգվածների հետ։

1933 թ. Հայաստանի գյուղական սովետները մտան համամիութենական մրցության մեջ, որից հաղթանակով դուրս եկան Բայանդուրի (Վաղատուր), Աղինի (Անի), Օքջու, Զոհրաբլուի (Մրգանուշ), Կողրի, Մաստարայի, Փարաքարի, Իշևանի, Ալմալուի (Խնձորուտ), Գյուլագարակի, Քյալագարխի (Շենավան), Թոփրախկալայի (Հնարերդ), Ջաջուռի, Մոլլամուսայի (Ոսկեհասկ) և այլ գյուղական սովետներ։ Այդ սովետներն օրինակելի էին իրենց կազմակերպվածությամբ, ինչպես նաև կոլտնտեսությունների քաղաքական-տնտեսական ամրապնդման, պլանների ու պետական պարտավորությունների կատարման, սոցիալ-կուլտուրական շինարարության բնագավառում ձեռք բերած հաջողություններով։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի և հանրապետության կառավարության ամենօրյա կոնկրետ օգնության շնորհիվ, 1934 թ. ապրիլ-սեպտեմբերին մրցության մեջ ընդգրկվեցին ոչ միայն գյուղական, այլև քաղաքային ու ավանային սովետները։ Մրցության մեջ մտնող գյուղական սովետները, կոլտնտեսությունները ու սովխոզները, կոլտնտեսականները, չքավոր ու միջակ մենատնտեսներն ընդգրկում էին աշխատանքի բոլոր ճյուղերը։ Վերոհիշյալ ժամանակաշրջանում գյուղական սովետները, նրանց սեկցիաները և սովետների պատգամա-

17 ՀԿԿ Կենտկոմի կուսարխիվ, ֆ. 813, գ. 20, թ. 34։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։

վորական խմբակներն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին անասունների օրինակելի խնամքի, կոլտնտեսականներին կովերով ապահովելու, կուսակցության ու կառավարության որոշումների արագ կատարման վրա։

Սոցիալիստական մրցության ծավալումը նպաստեց նաև շինարարական աշխատանքների աշխուժացմանը։ Մասսայական աշխատանքներ ծավալվեցին գյուղական, միջգյուղական ճանապարհաշինարարության, հին կամուրջների վերանորոգման ու նոր կամուրջների կառուցման, աշխատուժի ճիշտ հաշվառման ու օգտագործման ուղղությամբ։

Երկրորդ հնգամյակի խնդիրների հաջող կատարումը պահանջում էր է՛լ ավելի լայն զանգվածների համախմբում սովետների շուրջը, նրանց նորանոր խավերի ներգրավում սոցիալիստական շինարարության մեջ։ Կատարելով այդ խնդիրները, կուսակցությունը ղեկավարվում էր Վ. Ի. Լենինի այն ցուցումով, որ պատմական զարգացման տեմպերը որոշվում են շարժման մեջ ներգրավված մասսաների քանակով։ Այսպես, մինչև 1934 թ. հունիսի 25-ը հանրապետության շրջաններից 25-ն ընդգրկված էին սոցիալիստական մրցության մեջ, որին ակտիվորեն մասնակցում էին հատկապես Կոտայքի (Աբովյան), Մեղրու, Թալինի, Իջևանի, Ղարաքիլիսայի, Վաղարշապատի և Շամշադինի շրջանները[21]։

ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը 1935 թ. ապրիլի 22-ին քննության առավ 1934 թ. մրցության արդյունքները և գյուղական ու քաղաքային սովետներից պահանջեց ապահովելու ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության «Մրցությունը կազմակերպելու մասին» որոշման կենսագործումը։ Հանրապետության աշխատավորների բոլոր ուժերի մոբիլիզացումն ապահովեց Կենտգործկոմի այդ պահանջի կատարումը։ Ուշագրավ է, որ պարգևատրման համար շրջանային մարմինների կողմից հանրապետության մրցույթային հանձնաժողովների քննարկմանը ներկայացվել էին գյուղսովետների, նրանց սեկցիաների, վերստուգիչ հանձնաժողովների նախագահներ և առանձին ակտիվիստներ (300 հոգի), որոնցից 32-ը նշվում էին որպես լավագույններ[22]։

Հանրապետության գյուղերում մրցությունը նոր թափով ծավալվեց Սովետական Հայաստանի 15-ամյակի նախօրյակին։ Այսպես, օրինակ, Միկոյանի (Եղեղնաձոր) շրջանի կոլտնտեսականներն ու աշխատավոր մենատնտեսները խանդավառությամբ արձագանքեցին հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի (1935) Հայաստանի պատգամավորության կոչին՝ մրցության դուրս գալու մասին։ Մրցության մեջ մտան շրջանի կոլտնտեսությունները, 28 անասնապահական ֆերմաներ ու բրիգադներ և 145 դաշտավարական բրիգադներ՝ ստանձնելով նոր պարտավորություններ։ Շրջանի հարվածային կոլտնտեսականների հավաքը որոշեց մրցության մեջ մտնել Մարտունու, Ազիզբեկովի և Նոր Բայազետի (Կամս) շրջանների հետ՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակը նոր նվաճումներով դիմավորելու համար։

Շրջանի աշխատավորները պատվով կատարեցին վերցրած պարտավորությունները։ Նրանք ավելի քան 1966 հա արտեր մաքրեցին քարերից կամ

21 ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսարխիվ, ֆ. 1, գ. 308, կ. 25, թ. 76։
22 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 41, ց. 1, գ. 403, թ. 17։

պլանը գերակատարեցին 254 հեկտարով, 1500-ի փոխարեն դաշտ տեղափոխեցին 3123 տ գոմաղբ (պլանը կատարվեց 208%-ով)[23]։

Սոցիալիստական մրցության շնորհիվ կառուցվեց 57 կմ հանդամիջյան և 11 կմ միջգյուղային ճանապարհ։ 1935 թ. նոյեմբերի 29-ին ավարտվեց շրջանի միջգյուղական ճանապարհների կառուցումը և դրանով իսկ ստեղծվեց ավտոերթուղի՝ բոլոր գյուղերի ու շրջկենտրոնի միջև։

Միկոյանի շրջանի աշխատավորների ջանքերով 750 ha հող ջրարբիացվեց, տնկվեցին ավելի քան 243.000 պտղատու և դեկորատիվ ծառեր։ Միկոյան, Դնիշիկ, Խաչիկ գյուղերում պատրաստվեցին զբոսայգիներ, Ենգիջա և Արփա գյուղերում՝ ծաղկանոցներ։

Կուսակցության շրջկոմի (քարտուղար՝ Համունի) եռանդուն աշխատանքի շնորհիվ աճեցին լավ կադրեր՝ կոլտնտեսության նախագահներ, բրիգադիրներ, ֆերմայի վարիչներ։ Շրջանն ուներ 1900 հարվածայիններ, որոնք իրենց շուրջը համախմբեցին կոլտնտեսային դաշտերի հերոսներին և շրջանը դուրս բերին հետամնաց վիճակից[24]։

Նորարարական շարժման հետագա լայն ծավալման գործում հսկայական մոբիլիզացնող և կազմակերպող նշանակություն ունեցավ Համկ(բ)կ Կենտկոմի կողմից 1935 թ. նոյեմբերին Կրեմլում հրավիրված ստախանովականների համամիութենական I խորհրդակցությունը։

Այդ շարժումն իսկական մասսայական, համաժողովրդական շարժում դարձնելու գործում բացառիկ նշանակություն ունեցավ Համկ(բ)կ Կենտկոմի 1935 թ. դեկտեմբերյան պլենումի «Արդյունաբերության ու տրանսպորտի հարցերը՝ կապված ստախանովյան շարժման հետ» որոշումը։ Համկ(բ)կ Կենտկոմն այդ որոշումով կուսակցական, տնտեսական և արհմիութենական կազմակերպությունների ուշադրությունը բևեռեց նորարարական շարժումը ղեկավարելու, այդ շարժման մեջ առավելագույն կազմակերպվածություն մտցնելու հարցերի վրա՝ հանուն բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի հետագա բարձրացման։

Դեկտեմբերյան պլենումի որոշումներն ինչպես արդյունաբերության աշխատողների, այնպես և կոլտնտեսային լայն զանգվածների մեջ աշխատանքային բուռն վերելք առաջ բերեցին։ Սոցիալիստական մրցության ծավալման գործում առանձնապես ոգեշնչող ու կազմակերպող դեր խաղացին կուսակցության և կառավարության հրավիրած՝ գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունները, որոնց նպատակն էր հաշվի առնել առաջավորների փորձը, վեր հանել աշխատանքի նոր մեթոդներ, և նորարարական շարժման հարցերը դնել գյուղատնտեսության աշխատողների ուշադրության կենտրոնում։

1935 թ. վերջերին և 1936 թ. սկզբներին Համկ(բ)կ Կենտկոմի նախաձեռնությամբ կազմակերպվեցին ճակնդեղի դաշտերի հարվածային կոլտնտեսուհիների, առաջավոր կոմբայնավարների և կոմբայնավարուհիների, հացահատիկի բարձր բերքատվության վարպետների, տրակտորիստների և կալսիչների մեքենավարների, անասնապահության, վուշագործության ու կանեփագործության առաջավորների և այլ խորհրդակցություններ։ Դրանցում

23 «Խորհրդային Հայաստան», 5. VIII. 1934։
24 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, գ. 106, թ. 151։

կուսակցության ու կառավարության ղեկավարները լսում ու հաշվի էին առնում գյուղատնտեսական արտադրության առաջավորների փորձն ու նվաճումները, նպատակամղում էին նրանց դեպի արտադրական նորանոր հաջողություններ։

Ինչպես ամբողջ սովետական երկրում, այնպես էլ Հայաստանում 1935—1937 թթ. տեղի ունեցան գյուղատնտեսության տարբեր բնագավառների առաջավորների բազմաթիվ խորհրդակցություններ։ 1935 թ. հունիսին Երևանում կայացան հարվածային անասնապահների ու տրակտորիստների և հացահատիկային կուլտուրաների բարձր բերքի վարպետների խորհրդակցություններ, 1937 թ. հունվարին՝ բամբակագործության առաջավորների հանրապետական II խորհրդակցությունը։ Նույն թվականի փետրվարին հացահատիկի բարձր բերքի առաջավորների խորհրդակցություններ ու հավաքներ կայացան նաև շրջանային կենտրոններում։

Այդ խորհրդակցություններում ու հավաքներում սկզբնական կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ կոլտնտեսային գյուղի առաջավորները քննարկում էին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության աճի համար իրենց ծավալած սոցիալիստական մրցության արդյունքները, նշում հետագա խնդիրներն ու մշակում դրանք իրագործելու ուղիներն ու մեթոդները։ Սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ծավալման բովում կուսակցությունը հետապնդում էր սոցիալիստական աշխատանքի իսկական վարպետներ դաստիարակելու նպատակ։

Ուշագրավ է, որ նշված խորհրդակցությունների ու հավաքների հրավիրման նախաձեռնողները մեծ մասամբ կոլտնտեսային դաշտերի առաջավորներն էին։ Դա վկայում է այն մասին, որ նրանք արդեն այնպիսի հեղինակություն էին ձեռք բերել գյուղացիության մեջ, որ կարողանում էին համախմբել աշխատավորներին և իրենց իսկ օրինակով նրանց մղել ակտիվ, նվիրված աշխատանքի։

Գյուղատնտեսության առաջավորների այդ նախաձեռնություններին արագորեն արձագանքում ու ղեկավարություն էին ցույց տալիս կուսակցական կազմակերպությունները։

Հայաստանի կոլտնտեսային գյուղում սոցիալիստական մրցության ծավալման նոր էտապի սկիզբ դրեց հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարը։ Նրա որոշումները կոլտնտեսություններում արտադրական բուռն վերելք առաջացրեցին գարնանացանի պլանները կատարելու և գերակատարելու ուղղությամբ։

1935 թ. մարտի 29-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցությունը դիմեց Հայաստանի բոլոր կոլտնտեսականներին, կոչ անելով պլանների կատարման ու գերակատարման արտադրական արշավ սկսել՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձին։ Այդ դիմումի մեջ հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի պատվիրակներն ի լուր ամենքի հայտարարում էին, որ իրենք սոցիալիստական մրցության են դուրս գալիս միմյանց հետ և կոչ են անում արտելի օրինակելի կանոնադրության դրոշի ներքո «մասսայական մի մրցում սկսել՝ կոլտնտեսություն-կոլտնտեսության, բրի-

գաղա-բրիգադի, շրջան-շրջանի հետ, այնպիսի մի մրցում, որ իսկապես հավերժացնի մեր ազատագրման փառապանծ տասնհինգամյակը»[25]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տալով հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի Հայաստանի պատվիրակների այդ նախաձեռնությանը, հանձնարարեց ՀՍՍՀ Ժողկոմխորհին՝ մրցանակներ սահմանել մրցության առաջավորներին պարգևատրելու համար, ինչպես նաև նույն նպատակով սահմանել ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Ժողկոմխորհի փոխանցիկ դրոշներ[26]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձին նվիրված արտադրական արշավին զուգընթաց հանրապետության գյուղատնտեսության մեջ և հատկապես ՄՏԿ-ներում ընթանում էր Ստալինգրադի (Վոլգոդրադ) երկրամասի Սուրովիկինի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադավար Ն. Շեստոպալովի մրցականչին որպես արձագանք ծավալված սոցիալիստական մրցությունը՝ գարնանացանի և վաղ ցելի աշխատանքները լավագույն կերպով կատարելու և գերակատարելու համար։ Ընդառաջելով մրցության մեջ մտած առաջավոր տրակտորիստների ցանկությանը, ՀՍՍՀ հողժողկոմատը և ՄՏԿ-ների մրցության հանրապետական կոմիտեն տրակտորիստների և տրակտորային բրիգադավարների հանրապետական մրցություն հայտարարեցին՝ գարնանացանի ընթացքում տրակտորների լավագույն օգտագործման ու նրանց անխափան աշխատանքն ապահովելու համար և պարգևատրման ֆոնդ սահմանեցին։ Հավանություն տրվեց նաև Վաղարշապատի ՄՏԿ-ի տրակտորիստների՝ գարնանացանն ավարտելուց հետո լավագույն տրակտորիստների հանրապետական հավաք հրավիրելու առաջարկին։ Այդ նպատակով սահմանվեցին 100 փոխանցիկ մանդատներ, որոնք նվաճելու համար հարվածային տրակտորիստները եռանդուն պայքար էին մղում։

Ստախանովյան շարժման էությունը բնութագրող հատկանիշները բնորոշ էին նաև Հայաստանի կոլտնտեսային գյուղում ծավալված սոցիալիստական մրցությանը, որը գնալով ավելի ու ավելի մասսայական էր դառնում։ Օրավուր բազմապատկվում էր մրցության մեջ ընդգրկվող կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների, նրանց առանձին բրիգադների, կոլտնտեսականների, տրակտորիստների, կոմբայնավարների և մեխանիզատորական կադրերի քանակը, որոնք ձեռք էին բերում բարձր ցուցանիշներ։ Այսպես, օրինակ, միայն Արթիկի ՄՏԿ-ում 1935 թ. գարնանացանի ընթացքում մրցում էին 108 տրակտորիստներ, որոնցից 47-ը՝ հարվածայինի կոչում էին ստացել, 57-ը կատարել էին իրենց առաջադրանքները, իսկ առանձնապես աչքի ընկնող 28 տրակտորիստներ դրամական պարգև էին ստացել[27]։

Ստեփանավանի ՄՏԿ-ի մրցության մեջ մտած 70 տրակտորիստներից 48-ը հարվածայիններ էին[28], Լենինականի ՄՏԿ-ում 180 տրակտորիստներից և ՄՏԿ-ի արհեստանոցի բանվորներից հարվածային էին 112-ը և այլն[29]։

1935 թ. առաջին կիսամյակում ՄՏԿ-ներում և ՄՏԱ-ներում մրցության մեջ մտած 1406 աշխատողներից 982-ը հարվածայիններ էին, որոնցից

25 «Խորհրդային Հայաստան», 1.IV.1935։
26 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, գ. 244, թ. 210։
27 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 204, գ. 4, թ. 41։
28 Նույն տեղում, թ. 43։
29 Նույն տեղում, թ. 51։

առանձնապես աչքի ընկնող 431 տրակտորիստներ ու բանվորներ դրամական պարգև էին ստացել[30]։

Սոցիալիստական մրցությունը ծնում էր տեխնիկային տիրապետած բազմաթիվ կադրեր, որոնք կատարում էին նոր, էլ ավելի բարձր նորմաներ։ Օրինակ, Արարատի ՄՏԿ-ի տրակտորիստ Կ. Շահինյանը 191-ի փոխարեն վարել էր 271 հա հող։ Դա բարձր էր Շեստոպալովի բրիգադի տրակտորիստների ձեռք բերած ցուցանիշներից և ռեկորդային էր Հայաստանում։ Նույն ՄՏԿ-ի տրակտորիստ Մ. Բազիկյանը նախքան մրցության մեջ մտնելը համարվում էր ՄՏԿ-ի վատ տրակտորիստներից մեկը։ Մտնելով մրցության մեջ, նա անցավ առաջավորների շարքը և տրակտորիստների հանրապետական առաջին հավաքին մասնակցելու մանդատ ստացավ[31]։ Մարտունու ՄՏԿ-ի N 5 բրիգադի տրակտորիստ Հ. Գալստյանը 22 օրում 210 հա հերկ էր կատարել՝ խնայելով 988 կգ վառելանյութ։ «Ստալինեց» տրակտորով Լենինականի ՄՏԿ-ի տրակտորիստ Ա. Պողոսյանը մեկ գիշերվա ընթացքում 5,5-ի փոխարեն կատարել էր 10,5 հա վար և նվաճել ՄՏԿ-ի փոխանցիկ դրոշը[32]։ Տրակտորիստներ Ա. Պողոսյանի, Կ. Շահինյանի, Հ. Գալստյանի, Ա. Հովհաննիսյանի և շատ ուրիշների անունները լայնորեն հայտնի էին ոչ միայն հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս, որովհետև նրանք տվեցին բարձր արտադրողական սոցիալիստական աշխատանքի փայլուն օրինակներ։

Հանրապետության հարվածային տրակտորիստներն իրենց I հավաքին եկան արտադրական զգալի նվաճումներով։ Եթե նախորդ տարում՝ 1934 թ., տրակտորային աշխատանքների պլանների կատարումն զգալիորեն ուշացել էր և յուրաքանչյուր տրակտոր միջին հաշվով վարել էր 123 հա հող, տրակտորները տվել էին 2700 փութ վառելանյութի գերածախս, ապա 1935 թ. տրակտորիստները գարնանացանի աշխատանքները վերջացրին ժամկետից շուտ, մեկ տրակտորի միջին արտադրողականությունը հասցրին 149 հա-ի և տնտեսեցին շուրջ 5000 փութ վառելանյութ։

Սակայն ձեռք բերվածը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակին զեկույց տալու իրավունք նվաճելու համար մղվող պայքարի միայն առաջին էտապն էր։ Հարվածային տրակտորիստների հանրապետական I հավաքը (1935 թ. հունիս, Երևան), քննարկելով գարնանացանի և շեստոպալովյան մրցության արդյունքները, գյուղատնտեսության բոլոր առաջավորներին կոչ արեց է՛լ ավելի լայնորեն ծավալելով մրցությունը, շարունակել պայքարը նրա երկրորդ էտապում՝ բերքահավաքի ընթացքում ե անկորուստ հավաքել կոլտնտեսային դաշտերի բերքը։ Հետևելով հավաքի կոչին՝ հանրապետության մեխանիզատորներն իրենց փայլուն կերպով դրսևորեցին բերքահավաքի ժամանակ։ Այսպես, օրինակ, նրանցից յուրաքանչյուրը 1935 թ. միջին հաշվով պլանով նախատեսված 160-ի փոխարեն հավաքել էր 275 հա բերք, որը նախորդ տարվա համեմատությամբ գրեթե կրկնակի անգամ ավելի էր։ Առանձին կոմբայնավարներ հավաքել էին մինչև 500 հա և ավելի բերք։ Կալսիչ մեքենաները կալսել էին մինչև 700 տ հացահատիկ, տրակտորիստները վարել էին մինչև 500 հա հող և այլն[33]։

---

30 Նույն տեղում, թ. 40։
31 Նույն տեղում, թ. 41։
32 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 204, գ. 4, թ. 49։
33 Նույն տեղում, թ. 51։

Նույնպիսի հաջողությամբ և աշխատանքային բարձր խանդավառությամբ էր ընթանում դաշտավարական բրիգադների, բրիգադավարների մրցությունը, որը հայտարարել էին «Խորհրդային Հայաստան»-ը և ՀՍՍՀ Հողժողկոմատը՝ հացահատիկի բարձր բերքատվության հասնելու նշանաբանով Հյուսիսային Օսեթիա-Հայաստան և Ադրբեջան-Հայաստան սոցիալիստական մրցությամբ անասնապահության վերելքի հասնելու համար։ Այդ մրցությանը հատկապես ակտիվորեն էին մասնակցում Վեդու (Արարատ), Ղամարլուի, Հոկտեմբերյանի, ինչպես և Վաղարշապատի բամբակացան շրջանները։ Սոցիալիստական մրցության հետագա ծավալման գործում նշանակալից դեր կատարեցին նաև Միջին Ասիայի և Հայաստանի բամբակագործների փոխայցելությունները։ Դրանք ոչ միայն արտադրական նոր վերելքի խթան հանդիսացան, այլև նպաստեցին ժողովուրդների բարեկամության և եղբայրական դաշինքի հետագա ամրապնդմանը։

Լայնորեն ծավալված սոցիալիստական մրցությունը վկայում էր, որ բարձրացել է կոլտնտեսականների արտադրական ակտիվությունը և սոցիալիստական գիտակցականության աստիճանը։ Կոլտնտեսություններում ստախանովյան շարժման լայն ծավալման և կոլտնտեսականների արտադրական ակտիվության բարձրացման մասին է խոսում նաև այն փաստը, որ միայն մեկ տարվա ընթացքում կոլտնտեսականների թիվը հանրապետությունում բարձրացել էր 143 հազար մարդով, իսկ յուրաքանչյուր կոլտնտեսությունում՝ 120-ով։ Կոլտնտեսականների վաստակած աշխատանքի քանակը նույն ժամանակաշրջանում յուրաքանչյուր կոլտնտեսությունում բարձրացել էր 6600 աշխատանքով[34]։ Միայն հողագործության մեջ կոլտնտեսականները 1935 թ. վաստակել էին 4,4 միլիոն աշխատանքով ավելի, քան 1934 թ., իսկ անասնապահության բնագավառում՝ 1,4 միլիոնով ավելի, քան նախորդ տարում[35]։

Հանրապետության 484 կոլտնտեսությունների տվյալներով, միայն պարզևատրման կարգով կոլտնտեսականների հաշվին 1935 թ. գրանցվել էր 81400 աշխատանք[36]։

Կոլտնտեսային աշխատավորության արտադրական և ստեղծագործական ջանքերի մասսայական ներդրումը էապես նպաստեց սոցիալիստական գյուղատնտեսության բուռն վերելքին։ Դրա վառ վկայությունն էր ՀՍՍՀ Հողժողկոմատի կազմակերպած գյուղատնտեսական ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձին։ Ցուցահանդեսի առանձին բաժիններում ներկայացված էին սոցիալիստական անասնաբուծության, հացահատիկի արտադրության, այգեգործության, բամբակագործության, ծխախոտագործության և շերամապահության հաջողությունները, կոլտնտեսային դաշտերի էներգազինվածության աճը։

ՀՍՍՀ գյուղատնտեսության բնագավառի աշխատողները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձը դիմավորեցին արտադրական մեծ նվաճումներով։

Սովետական իշխանության 15 տարիների ընթացքում հանրապետության ոռոգվող հողատարածությունը ավելացել էր մոտ 2,5 անգամ։ Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 1926—1927 թթ. անփոփոխ գնե-

34 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, գ. 272, թ. 24։

35 Նույն տեղում, թ. 24։

36 Նույն տեղում, գ. 266, թ. 110։

րով 1919 թ. 15 մլն 127 հազար 900 ռուբլուց 1935 թ. հասել էր 87 մլն 235 հազար 900 ռուբլու։ Այդ ընթացքում մոտավորապես յոթ անգամ աճել էր անասնաբուծության արտադրանքը։ Հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատում էին 1000 տրակտոր և գյուղատնտեսական բազմաթիվ այլ մեքենաներ։ Գյուղատնտեսության ինդուստրիալ հիմքն էին կազմում հանրապետության 20 մեքենատրակտորային կայաններ[37]։

Համկ(բ)կ Կենտկոմը և սովետական կառավարությունը, բարձր գնահատելով սովետական իշխանության տարիներին Հայաստանի աշխատավորության ձեռք բերած նվաճումները, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձի առթիվ Կրեմլում ի պատիվ Սովետական Հայաստանի պատվիրակության ընդունելություն կազմակերպեցին։

Պատվիրակությունը կուսակցության և կառավարության ղեկավարներին հանձնեց զեկույց՝ ստորագրված Հայաստանի 150 հազար հարվածային բանվորների և կոլտնտեսականների կողմից։ Զեկույցում պատմվում էր այն մասին, թե ինչպես ավերված Հայաստանը սովետական իշխանության 15 տարիների ընթացքում դարձավ ծաղկող ազատ հանրապետություն, կոլտնտեսությունների, նոր ֆաբրիկաների ու գործարանների, հզոր էլեկտրակայանների երկիր[38]։ Հանրապետության բամբակացան կոլտնտեսությունները 1935 թ. պլանով նախատեսված 15900-ի փոխարեն հավաքել էին 17600 տ բամբակ։ Բամբակի մեկ հա-ի միջին բերքատվությունը նախորդ տարվա 7,6-ի փոխարեն հասել էր շուրջ 10, հացահատիկինը՝ 8,8-ի փոխարեն 9,2, ծխախոտինը՝ 6,6-ի փոխարեն 8,6, խաղողինը՝ 57-ի փոխարեն 75 ցենտների և այլն[39]։

Հայաստանի բոլոր կոլտնտեսությունները 1935 թ. պլանները կատարել էին։ Դա կոլտնտեսություններում համակոլտնտեսային և պետական շահերի զուգակցման ապացույցն էր, կոլտնտեսականների կողմից համապետական շահերի գիտակցման վկայությունը։ Կատարելով գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության պահանջները, Հայաստանի կոլտնտեսությունները զգալիորեն մեծացրել էին իրենց եկամուտները։ Բազմաթիվ կոլտնտեսություններ տարեկան ստանում էին մեկ միլիոն ռուբլու և ավելի եկամուտ։ Այսպես, օրինակ, Վաղարշապատի շրջանի «Անաստված» կոլտնտեսությունը 1935 թ. ստացել էր 2 միլիոն, իսկ Սվերդլովի անվան կոլտնտեսությունը՝ 1,9 միլիոն ռուբլու եկամուտ և այլն։

Կուսակցությունը և կառավարությունը, բարձր գնահատելով սոցիալիզմ կառուցող հայ աշխատավորության ստեղծագործական աշխատանքային նվաճումները, առաջավոր բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր մտավորականության ներկայացուցիչների մի մեծ խմբի պարգևատրեցին ՍՍՀՄ շքանշաններով ու թանկարժեք նվերներով։

Հայաստանի աշխատավորության նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ցուցաբերած հոգատարության պատասխանը հանդիսացան հանրապետության աշխատավորության անունից Հայաստանի պատվիրակության ստանձնած պարտավորությունները։ Հայաստանը սոցիալիստական աշխատանքի օրինակելի հանրապետություն դարձ-

37 «Խորհրդային Հայաստան», 3. XII. 1935։
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում։

նելու մասին պատվիրակության տված խոստումը նոր հզոր վերելքի սկիզբ դրեց Հայաստանի գործարաններում, ֆաբրիկաներում, ՄՏԿ-ներում, սովխոզներում ու կոլտնտեսություններում։ Հանրապետության աշխատավորությունն աշխատում էր ամեն կերպ կատարել և գերակատարել ստանձնած պարտավորությունները և իր պարտքը հատուցել հայրենիքին։

Հանրապետության կոլտնտեսականներն ու մեխանիզատորներն ամեն կերպ ձգտում էին զարգացնել կոլտնտեսությունների բազմաճյուղ արտելային տնտեսությունը, ավելի շատ սննդամթերք և արդյունաբերական հումք տալ սովետական երկրին՝ հանուն նրա ապագա ծաղկման ու բարգավաճման։

Հոկտեմբերյանի ՄՏԿ-ի շքանշանակիր տրակտորիստ Ե. Հակոբյանը Կրեմլում խոստացած 1000-ի փոխարեն 1936 թ. վարել էր 1250 հա հող, իսկ Արթիկի ՄՏԿ-ի շքանշանակիր տրակտորիստուհի Կ. Դարբինյանը՝ 800-ի փոխարեն 965 հա հող[40]։ Լենինականի ՄՏԿ-ի շքանշանակիր տրակտորիստ Ա. Պողոսյանը «ՉՏԶ» մարկայի տրակտորով վարել էր 2200 հա հող. նույն ՄՏԿ-ի շքանշանակիր կոմբայնավար Գ. Մարջանյանը հավաքել էր 400, իսկ Բասարգեչարի ՄՏԿ-ի կոմբայնավար Ղ. Ավետիսյանը՝ 719 հա-բերք[41] և այլն։

Կոլտնտեսային գյուղի՝ տեխնիկայի տիրապետած և արտադրական բարձր ցուցանիշներ ձեռք բերած մարդկանց թիվը գնալով բազմապատկվում էր։

Սոցիալիստական մրցության լայն ծավալման և աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում հանրապետության մեխանիզատորների ձեռք բերած նվաճումների շնորհիվ երկրորդ հնգամյակի ընթացքում զգալիորեն բարձրացավ տրակտորների և կոմբայնների արտադրողականությունը։ Այսպես, պայմանական 15 ուժանոց մեկ տրակտորի արտադրողականությունը 1933 թ. 148-ից 1937 թ. հասել էր 353 հա-ի։ Պայմանական 15 ուժանոց մեկ կոմբայնը 1934 թ. հավաքել էր 187 հա հացահատիկի և արևածաղկի բերք, իսկ 1937 թ.՝ 203 հա[42]։

Նորարարական շարժումը երկրորդ հնգամյակում գյուղատնտեսության մեջ հզոր կազմակերպող միջոց դարձավ հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու գործում։ Լայն ծավալ էին ստացել հայրենասիրական այնպիսի շարժումները, ինչպիսիք էին «հարյուրականների» շարժումը (հեկտարից 100 փութ հացահատիկ), «երեսնականներինը»՝ բամբակի դաշտերում, «հինգհարյուրականներինը»՝ ճակնդեղի դաշտերում. դրանց նախաձեռնողները շարքային կոլտնտեսականներ էին, կոլտնտեսային գյուղի «հասարակ» մարդիկ (Մ. Դեմչենկո, Մ. Իգնատենկո, Պ. Անգելինա, Պոլուտագին և ուրիշներ, որոնք կարճ ժամանակամիջոցում հայտնի դարձան ամբողջ երկրում)։

Հետևելով երկրի գյուղատնտեսության առաջավորների օրինակին, արտադրական բարձր նվաճումներ էին ձեռք բերել նաև Հայաստանի կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները։ Բասարգեչարի շրջանի Գյոդակբուլաղ (Կարճաղբյուր) գյուղի կոլտնտեսության բրիգադավար Լ. Մարդարյանը հեկտարից ստացել էր 70,3 ցենտներ հացահատիկ, Ախուրյանի շրջանի Մոլլա-

40 ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, գ. 117, թ. 37։
41 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, գ. 2514, թ. 26, 27։
42 Նույն տեղում, թ. 26—27։

մուսա գյուղի կոլտնտեսության դաշտավարական բրիգադի առաջավոր բրիգադավար Մկրտչյանը՝ 63 ցենտներ գարի, Մարտունու շրջանի Ալիչալուի կոլտնտեսության բրիգադավար Գ. Ղազարյանը 1937 թ. յուրաքանչյուր հեկտարից նախատեսված 12-ի փոխարեն ստացել էր 41,5 ցենտներ ցորենի բերք և այլն։

Հետ չէին մնում նաև տեխնիկական կուլտուրաների բնագավառի հարվածայինները։ Տասնյակ առաջավոր կոլտնտեսություններ հեկտարից ստանում էին միջին թվով 15—21 ցենտներ բամբակ։ Առանձին բրիգադներ, օղակներ և բամբակահավաքներ հանդես էին բերում հարվածային աշխատանքի իսկական օրինակներ։ Այսպես, Ղամարլուի շրջանի Ջոհրաբլուի (Մրգանուշ) գյուղի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության օղակավարուհի Վ. Փանոսյանը յուրաքանչյուր հեկտարից ստացել էր 47, իսկ Գետազատի կոլտնտեսության օղակավարուհի Ա. Փանոսյանը՝ 38 ցենտներ բամբակ։ Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա գյուղի կոլտնտեսության չանաքավարուհի Ջ. Մուրադյանը օրական միջին հաշվով հավաքում էր 113 կգ բամբակ և այլն։

Հետևելով «հինգհարյուրականների» օրինակին, Հայաստանի ճակնդեղագործ հարվածայինները նույնպես, ագրոտեխնիկական միջոցառումների իրագործմամբ, բարձր բերքատվության հասան։ Այսպես, օրինակ, Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Ս. Ջոռնիյանը հեկտարից ստացավ 518, Ախուրյանի շրջանի Ախուրիկի կոլտնտեսության օղակավարուհի Ա. Մուրադյանը՝ 700, իսկ Թափադըլակի (Արևիկ) կոլտնտեսության օղակավարուհի Վ. Մադոյանը՝ 600 ցենտներ ճակնդեղ և այլն[43]։

Կոլտնտեսություններում ստախանովյան շարժումն ընթանում էր գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվության բարձրացման նշանաբանով։ Հայաստանի կոլտնտեսային գյուղի առաջավորների հերոսական պայքարը պսակվեց նրանով, որ հնգամյակի ընթացքում բարձրացավ գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվությունը։ Այսպես, օրինակ, 1932 թ. հացահատիկային կուլտուրաների բերքը հեկտարից եղել է 5,2, իսկ 1938 թ.՝ 8,6 ցենտներ, բամբակինը՝ 1932 թ.՝ 3,8, իսկ 1938 թ.՝ 17 ցենտներ, ծխախոտինը՝ 1932 թ.՝ 5,8, իսկ 1938 թ.՝ 8,2 ցենտներ, շաքարի ճակնդեղինը՝ 1932 թ.՝ 30,3, իսկ 1938 թ.՝ 86,0 ցենտներ, խաղողինը 1932 թ.՝ 39,3, իսկ 1938 թ.՝ 75 ցենտներ[44]։ Երկրորդ հնգամյակի վերջում, 1932 թ. համեմատությամբ, հացահատիկային կուլտուրաների համախառն բերքը աճել էր 204, իսկ բամբակի համախառն բերքը՝ 196%-ով[45]։ Զգալիորեն աճել էր նաև շաքարի ճակնդեղի, բանջարաբոստանային կուլտուրաների և մրգատու այգիների համախառն բերքը։

Լայնորեն ներգրավվելով սոցիալիստական մրցության մեջ՝ պղալի նվաճումների հասան նաև անասնապահները՝ սոցիալիստական անասնապահության զարգացման և անասունների մթերատվությունը բարձրացնելու գործում։ Այսպես, օրինակ, Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի կոլտնտեսության հովիվներ Մ. Օհանյանը և Ս. Բաղալյանը տեղական 100 ոչխարից ստացել էին 200 գառ։ Մարտունու շրջանի Ն. Ալիչալու (Արծվանիստ) գյուղի կոլ-

---

43 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, կապ. 22, թ. 21, 22։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում։

տնանսության կթվորուհի Մ. Ղազարյանը, խնամելով 10 կով, 1937 թ. յուրաքանչյուր կովից ստացել էր 11 ցենտներ կաթ։ Նույն կոլտնտեսության հովիվ Ս. Պետրոսյանը նույն թվականին խնամելով 270 գառ, նրանց քաշը սահմանված միջինը 27-ի փոխարեն հասցրել էր 38 կգ-ի[46]։

Երկրորդ հնգամյակում հանրապետության անասնապահության աճի մասին է վկայում հետևյալ աղյուսակը[47]։

(Բոլոր կարգի տնտեսություններում, առ 1-ը հունվարի 1938 թ. դրությամբ, հազար գլուխ)

Անասունների գլխաքանակը (հազար գլուխ)	1933 թ.	1938 թ.
Խոշոր եղջերավոր անասուններ (ամրողջ հանրապետությունում)	528,0	711,5
Այդ թվում կովեր	192,1	222,5
Եզներ	23,8	82,2
Ոչխարներ և այծեր	687,7	1197,5
Ձիեր	44,9	53,6

Այս տվյալները ցույց են տալիս, որ երկրորդ հնգամյակի ընթացքում սոցիալիստական գյուղատնտեսության ընդգավառի աշխատողների հերոսական ջանքերի շնորհիվ հանրապետության անասնապահությունը նշանակալից վերելք էր ապրել։

Այսպիսով, կուսակցությունը կազմակերպելով ու գեկավարելով հանրապետության աշխատավորների կողմից ծավալված սոցիալիստական մրցությունը, երկրորդ հնգամյակի տարիներին զգալի հաջողությունների հասավ գյուղատնտեսության զարգացման ընդգավառում։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ В АРМЯНСКОЙ ДЕРЕВНЕ В ГОДЫ ВТОРОЙ ПЯТИЛЕТКИ

ДАВИД ДАВТЯН

Резюме

В годы второй пятилетки широко развернулось социалистическое соревнование, организатором и руководящей силой которого была коммунистическая партия. В колхозах Армянской ССР, на МТС-ах большинство трудящихся включилось в социалистическое соревнование.

В годы второй пятилетки социалистическое соревнование в армянском селе явилось решающим фактором в деле индустриализации и завершения перестройки социалистического хозяйства.

46 Նույն տեղում, թ. 21—22։

47 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 139։